

Այս համարում

Հայերեն բաժին

- | | |
|--|---|
| 1- Թշթ-ի Պատգամավորական Ժողովի 49-րդ նիստից..... | 1 |
| 2- Լուրեր – Իրանահայ համայնք | 2 |
| 3- Լուրեր – Հայաստան | 2 |
| 4- Լուրեր – Սփյուռք..... | 3 |
| 5- Հասարակական..... | 6 |
| 6- Մշակույթ..... | 8 |

Այսնակների սղության պատճառվ
Հրաջա Ածայշանը Պարսկաստանը
եւ Հայ իին գրականություն Խոդվածների շարունակությունը
կտպագրվի հաշորդ համարում

Պարսկերեն բաժին

- | | |
|--|---|
| 1- Լուրեր-Իրան..... | 1 |
| 2- Լուրեր-Իրան, Հայաստան, Միաջազգային..... | 2 |

Շապիկի առաջին էջում՝

Ա. Սարգիս Եկեղեցի, Սալմաստ – Իրան

Շապիկի վերջին էջում՝

Վարդավարը Թեհրանում – Իրան

Համար 143, Հունիս 2008թ.

No. 143, June 2008

ماهנהمه لویس – شماره ۱۴۳ خرداد ماه ۱۳۸۷



Վայրի Բարդասարյան

ԹՇԹ-Ի Պատգամավորական Ժողովի 49-րդ նիստից

2008 թվականի մայիսի 12-ին տեղի ունեցավ Թեհրանի Հայոց Թեմի Պատգամավորական Ժողովի 49-րդ նիստը, որտեղ ներկա էին շուրջ 30 պատգամավորներ և Անթիասի Ազգային ժողովի ներկայացուցիչները։ Հարմիկ Դավթյանը։ Նիստի սկզբում ընթերցվեց նախորդ երկու նիստերի արձանագրությունները, ապա ՊԺ-ն ընդունած համարեց Քերմանշահ քաղաքի պատգամավորի հրաժարականը, որը երկար ժամանակ է, ինչ բացակայում է և չի կարողանում ներկայանալ նիստերին։

Նախկինից որոշված երեք հանձնախմբերից հասարակականը կյանքի չեղ կոչվել, այս նիստում հաստատվեց 4 հոգանոց հասարակական հանձնաժողովը։ Մոտ երկու տարի առաջ Կիլիկո Կաթողիկոսության Ազգային ժողովի համար մեր համայնքի Թշթ-ի ՊԺ-ի կողմից 10 պատգամավոր ընտրվեց, սակայն Լիբանանի անոնդարձերի հետևանքով Ազգային ժողովը տեղի չունեցավ և նրանց Լիբանան գնալը հետաձգվեց։ Այժմ հարաբեր է նկատվել, որ այդ ժողովը գումարվի և Թեհրանից 10 հոգի պես է մեկնի Լիբանան՝ որպես Ազգային ժողովի պատգամավորներ։ Երկու տարի առաջ, այդ պատգամավորների շարքում ընտվել է նաև մեր համայնքում հայտնի ազգային գործիչ ու բարերար պրն։ Լևոն Ահարոնյանը, որին հիմա մի շարք կուսակցականներ չեն ցանկանում տեսնել Ազգային ժողովի պատգամավորների ցանկում, այդ իսկ պատճառով, շրջանցելով հենց Կիլիկիո Կաթողիկոսության Ազգային ժողովի կանոնագրությունը, որտեղ շեշտվում է, որ նման պատգամավորներ ընտրվում են չորս տարվա համար, ցանկանում են կրկին ընտրություններ անցկացնել և դուրս դնել ոմանց, հատկապես՝ պրն։ Լևոն Ահարոնյանին՝ ՊՐՆ. Լ. Ահարոնյանի դեմ այս քայլի պատճառը պարզ է. դա պրն. Լ. Ահարոնյանի հայտնի նամակի հիլում է Անթիասի Արամ վեհափառին, որտեղ որոշ նկատառումներ կան մեր համայնքում հոգևոր դպրոցի բացման կապակցությամբ։ Վերոհիշյալ հաղոց տարբեր վեճերի առիթ եղավ ՊԺ-ի ժողովում և որի շուրջ եղան տարբեր նորբեր, որոնց կարևոր մասերը կներկայացնենք Զեր ուշադրությանը։

Անկախ և ոչ կուսակցական պատգամավորների մեջ մասը այն կարծիքին էին, որ պետք է ընդունել հենց երկու տարի առաջ ընտրված պատգամավորներին և եթե նրանց մեջ կան որոշները, որոնք չեն ցանկանում կամ չեն կարող գնալ, միայն նրանց փոխարինողների համար ընտրություն լինի։ Նրանք հենվում էին հենց Կիլիկիո Կաթողիկոսության կանոնադրության «Ազգային Ընդհանուր ժողով» գլուխ հոդված 22 ա.-ի վրա, որտեղ այսպես է նշված՝ «Ազգային Ընդհանուր ժողովի աշխարհական երեսփոխանություն կը ներկայացնեն ներկայացուցական ժողովների կողմից չորս տարվա շրջանի համար»։

Մեր թեմի կանոնադրության մեջ այս հարցի կապակցությամբ որևէ կետ չկա և եթե այդ ընտրությունը կայացել է, որևէ ժամկետ դրա համար չի նախատեսվել։

Թշթ-ի բարեհնամ Արաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսյան ասաց. «Վեհափառն Անթիասից ինձ զանգել է ու ասել, որ նոր ընտրություն կատարեք և ես պետք է կատարեմ նրա ասածը»։

Մեր համայնքում Ազգային ժողովի ներկայացուցիչ նկտ. Դարնիկ Դավթյանն սկզբում այս կարծիքն էր, որ եթե նախկին 10 հոգուց որևէ մեկը չի կարողանում գնալ, նրա փոխարեն մի ուրիշ ընտրել, սակայն մի քանի անգամ Արքազան Հոր հետ առանձին գրուցելուց հետո իր կարծիքը փոխեց։

ՊԺ-ի դիմանի նախագահ դկտ. Լևոն Դավթյանն ասաց. «Ինձ համար ոչ թե Կիլիկիո Կաթողիկոսության Ազգային ժողովի

կանոնադրությունն է հիմք, այլ Վեհափառ հոր և Սրբազն հոր խոսքը», նրան գգուշացրին, որ Վեհափառ հայրը նաև ընտրվում է ըստ այդ կանոնադրության, սակայն նա կրկին շեշտեց իր կարծիքը, որ Վեհափառ հոր խոսքը վերադասում է կանոնադրությունից:

Դկտ. Լևոն Ղափյանը շատ էր շտապում թեկնածուների ամուսնությունը գրելու գրատախտակի վրա, որպեսզի քվեարկություն անցկացվի, սակայն ոչ կուսակցական և անկախ պատգամավորների մեջ մասն գգուշացրին, որ չեն մասնակցելու քվեարկությանը: Տրվեց 5 րոպեանոց դադար, որից հետո նոյն վեճերը կրկնվեցին և վերջում Սրբազն Հայրը և դկտ. Լևոն Ղափյանը միմյանց հետ խորհրդակցեցին և հայտնեցին, որ այս նիստը ավարտված է համարվում և այս օրակարգով կզբաղվեն հաջող գումարվելիք նիստում:

Լուրեր

Բրանիանայ Համայնք

ԳԻՐՔ ԻՐԱՆԱՇԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լոս Անջելեսի իրանցի ներգաղթողները: Դասարակական ցանցերի դերը եւ տնտեսական ինտեգրացումը» վերնագրով փիլիսոփայական գիտությունների թեկնածու Կլաուդիա Տեր-Մարտիրոսյանի գիրքը, որը վերջերս է լույս տեսել Լոս Անջելեսում, վեր է հանում այնտեղ ապրող առաջին սերնդի ընդհանրապես իրանցիների եւ մասնավորապես իրանահայերի փորձառությունները, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթերը» շաբաթաթերթը:

Գրի համար հիմք են ծառայել այն հարցագործույթները, որոնք հեղինակը անցկացրել է ավելի քան 700 իրանցի ընտանիքների հետ: Նրանց թվում են եղել մահմեդականներ, հրեաներ, բահայներ եւ հայեր:

Իրանցիները մեծ թվով սկսել են Լոս Անջելես տեղափոխվել 1978-79 թվերին՝ իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո, իհմնականում իրենց տնտեսական վիճակը բարելավելու նպատակով:

Ստացված Գրքեր


«Կյանքի Խճանկարներ» գիրքը

2008 թվականին Գլենդել քաղաքում լույս տեսավ ԱԱՍ-ում բնակվող իրանահայ մտավորական և ազգային գործիչ, Ռուբեն Քեշիշյանի (Կորյուն) երկրորդ գիրքը: Նա գիրքը նվիրել է իր ծնողներին՝ պրն. Սամսոն Վարդանի Քեշիշյանին և տիկ. Օվսաննա Թումասի Աղամյանին:

գիրքի մեջ տեղ են գտել տարբեր նյութեր՝ ազգային-հասարակական, հայրենասիրական,

ընտանեական,

մարդասիրական, ինչպես նաև ճամբրոդական հուշեր և հանրիհառմեր և նրա մի քանի նշանակալի նամակներ: Իր գրքում Քեշիշյանը անդրադարձել է նաև իր գրած պատմվածքներին:



Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 3 ՄԼՆ 230,7 ՃԱԶԱՐ

Ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3 մլն 230,7 հազ. մարդ, որից 2 մլն 069.5 հազ.-ը՝ եղել է քաղաքային բնակչությունը, 1 մլն 161.2 հազ.-ը՝ գյուղական: Ինչպես Արմենպետխն տեղեկացրին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, 2008-ի հունվար-մարտին նախորդ տարվա նոյն ժամանակահատվածի համեմատ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի շարունակվող աճն ապահովվել է ի հաշիվ բնակչության բնական հավելածի ավելացման (2.4 տոկոս) եւ միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշի նվազման (36.2 տոկոս): Այս տարվա առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է 9 478 ծնված, որը 2007-ի նոյն ժամանակաշրջանի համեմատ աճել է 2.9 տոկոսով, իսկ ծննդիլուրան ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով, համապատասխանաբար, աճել է 0.2 պրոմիլային կետով: Այս տարվա առաջին եռամսյակում հանրապետություն եկողների թվաքանակը նախորդ տարվա նոյն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 12.8 տոկոսով՝ կազմելով 2 973 մարդ, իսկ մեկնողների թվաքանակը նվազել է 4.9 տոկոսով՝ կազմելով 3 922 մարդ: Վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ սահմանային անցնան կետերով իրականացվող արտաքին ուղեւորաշրջանառության համախառն ծավալը կազմել է 512.1 հազ. ուղեւորություն, որը 85.5 հազ.-ով կամ 20.0 տոկոսով ավելի է 2007-ի նոյն ժամանակահատվածի ցուցանիշից:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հյուրընկալել է աշխարհահոչակ շանսոնիե Շառլ Ազնավուրին

ԵՐԵՎԱՆ, 3

ՅՈՒՆԻՍԻ

ԱՐՄԵՆՊՐԵՍ:

ՀՀ նախագահ

Սերժ

Սարգսյանն

հյուրընկալել է

աշխարհահոչ

ակ շանսոնիե

Շառլ

Ազնավուրի

եւ նրա իմարտեսարիոն Լեւոն Սայանին:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, մեծանուն մեր հայրենակացն այս անգամ Յայաստան է ժամանել ընտանիքի հետ: «Ամեն անգամ Յայաստան գալով մեծ ուրախություն են գործում», - ասել է Շառլ Ազնավուրը եւ գրիւնակությամբ նշել, որ ընտանիքում այլեւս հայաստանցի ունեն, թոռան կինը ծնունդով այստեղից է: Ուղունելով Շառլ Ազնավուրի հերթական այցը, նախագահը վստահություն է հայտնել, որ այն հաճելի պահեր կապարգելի մեր մեջ հայրենակցին: Սերժ Սարգսյանն անգնահատելի է համարել Շառլ Ազնավուրի ծառայություններն իր արվեստով ու



գործունեությամբ Հայաստան աշխարհին ըստ արժանվույն ներկայացնելու ուղղությամբ:

«Յուրաքանչյուր հայ հպարտ է նման հայութնակից ունենալով եւ նաեւ Զեր միջոցով է Հայաստանի նկատմամբ վերաբերմունք ձեւավորվում», - ընդգծել է Երկրի ղեկավարը: Սեծանուն երգին էր տպավորություններն է հայտնել մայրաքաղաքից, աւելով, թե հաճելիորեն զարմացած է կատարված փոփոխություններից: Զերմ ու անմիջական զրոյցի ընթացքում հանրապետության նախագահը եւ Շառլ Ազնավուրը խոսել են հայաստանյան կյանքի մասին:

Շառլ Ազնավուրը հատկապես հրատապ խնդիր է համարել գյուղական բնակավայրերի զարգացումը: Նշելով, որ տարածքային համաշափ զարգացումը կառավարության գերակայություններից է, Սերժ Սարգսյանն ասել է, որ այսօր խնդիրի լուծման ուղղությամբ ձեռնարկվում են լուրջ քայլեր, այդ թվում՝ փորձ է արվում երեւանում կենտրոնացած հիմնական ռեսուրսների որոշ մասը տեղաբաշխել նաեւ մարգերում:

Սանկտ Պետերբուրգում կայացել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեվի հետ



ԵՐԵՎԱՆ, 6 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Սանկտ Պետերբուրգի «Բալթիկայի աստղ» հյուրանոցում կայացել է նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ: Նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո սա Սերժ Սարգսյանի առաջին հանդիպումն էր Ադրբեյջանի իր պաշտոնակցի հետ: Նախագահների հանդիպմանը նախորդել էր Երկու երկրների արտաքին գործերի նախարարների մոտ մեկ ժամ տեսած հանդիպումը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, հանդիպումը սկսվել է Հայաստանի եւ Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարներ եղուարդ և արտաքին գործերի նախարարներ եղուարդ և արտաքին գործերի նախարարներ եւ Ելմար Մամեդյարովի, ԵԱՀԿ Սինսկի խնդիր համանախագահներ Յուրի Մերզյանովի, Սերյոյ Բրայզայի եւ Բեռնար Ֆասիեի, ինչպես նաև ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի մասնակցությամբ:

Այնուհետեւ երկու երկրների ղեկավարները հանդիպումը շարունակել են դեմ առ դեմ ձեւաչափով: Առանձնազրույցը տեսել է մեկ ժամ, որից հետո նախագահներին կրկին միացել են Հայաստանի եւ Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարները, ԵԱՀԿ Սինսկի խնդիր համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչը:

Հայկական կողմը կառուցողական է գնահատում Սանկտ Պետերբուրգում կայացած Սարգսյան-Ալիև առաջին հանդիպման արդյունքները: ճանաչողական հանդիպման ընթացքում կողմները ներկայացրել են բանակցային գործընթացի վերաբերյալ իրենց տեսակետները եւ արտաքին գործերի նախարարներին հանձնարարել են՝ ԵԱՀԿ համանախագահների հետ համագործակցությամբ շարունակել բանակցությունները:

Նախագահները նաեւ ցանկություն են հայտնել, որ ԵԱՀԿ Մինսկի խնդիր համանախագահները շարունակեն աշխատանքը կողմների մոտեցումների համաձայնեցման ուղղությամբ: Զերք է բերվել պայմանագրաժողովայություն, որ Մինսկի խնդիր համանախագահները հումքի վերջին կայցելեն տարածաշրջան: Այդ կոնկրետ ժամկետները կշտուկնեն առաջիկայում:

Նախագահները Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիևի հանդիպմանը հաջորդել է Երկու երկրների արտաքին գործերի նախարարների եւս մեկ հանդիպում:

Սլոյուտք

ՀԱՍԱՀՆԱՐԴԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՈՒ ՈՈՒԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

80000 դոլար մրցանակային ֆոնդ՝ գիտության ու ստեղծագործողությունը

Ստեղծման օրվանից Ուուսաստանի հայերի միությունը, այնուհետեւ նաեւ Համաշխարհային հայկական կոնգրեսը մեծ ուշադրություն են դարձրել Հայաստանում գիտության, արվեստի, կրթության զարգացմանը, այդ ոլորտների ներկայացուցիչների խթանմանը: Ստեղծագործական միությունների եւ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ հայտարարված մրցանակաբաշխության առնչությամբ գրողների միությունում իրավիրված ասուլիսում երեկ այս մասին նշեց ՈՐՍ եւ ՀՀԿ փոխնախագահ Վլադիմիր Ալյայանը:

Առաջին այդօրինակ օժանդակությունը 2000-ից ՈՐՍ-ու ցուցաբերում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նկատմամբ՝ այդ ծանր տարիներին ֆինանսական եւ սոցիալական օգնություն տրամադրելով ինչպես ակադեմիային, այնպես էլ հաստատության աշխատակիցներին: Այդ համագործակցությունը նոր որակ ստացավ 2007-ին, երբ Ուուսաստանի հայերի միությունը եւ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ստեղծեցին Գիտության զարգացման հիմնադրամը, որում առաջին ներդրումներն արել է ՈՐՍ եւ ՀՀԿ նախագահ Արա Աբրահամյանը:

Վլադիմիր Ալյայանի խոսքերով, ՈՐՍ-ի եւ ՀՀԿ-ի ուշադրության կենտրոնում այնուհետեւ հայտնվեց Հայաստանի գրողների միությունը, որի հետ ստեղծվեց գրականության աջակցության հիմնադրամ՝ հիմնականում Արա Աբրահամյանի ներդրմանը: Այս մոտեցումը ավելի լայն ու արդեն մրցութային տեսք ստացավ, երբ 2007-ին Արա Աբրահամյանի նախաձեռնությամբ գրողների եւ ժուռնալիստների միությունների հետ հայտարարվեցին ստեղծագործական մրցույթներ՝ Հայաստանում աննախադեպ մրցանակային ֆոնդերով:

Այս տարի որոշվել է եւս կազմակերպել մրցույթներ՝ գրողների եւ ժուռնալիստների միություններին հավելելով համատեղ մրցանակաբաշխությունը նաեւ

կոնպազտորների ու երաժշտագետների, նկարչների միությունների եւ Գիտությունների ազգային ակադեմիայի հետ՝ ընդհանուր 80000 ԱՄՆ դոլարին հաճարժեք դրամ մրցանակային ֆոնդով:

ՀՀԿ եւ ՈՐՍ մրցույթների շարքում եւս մեկն իր շարունակությունը կունենա այս տարի՝ ավանդական «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով։ Այս անց է կացվում ուսանողների եւ աշակերտների հանար։ Արդեն 4-րդ տարին հայտարարվող մրցույթի այս տարվա թեման է «Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք»։ Լավագույն գրական ստեղծագործության ամենամյա այս միջազգային մրցույթի հիմնական նպատակն է Յայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներին եւ աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովորի պատմական անցյալին, հավատ սերմանել նրա ապագայի հանդեպ։ Այս մրցույթը անց է կացնում ՀՀԿ-ն եւ ՈՐՍ-ը՝ ՀՀ կրթության ու գիտության նախարարության աջակցությամբ։ Աշակերտների եւ ուսանողների համար նախատեսված այս մրցույթի 6 հաղորդներից յուրաքանչյուրը ավանդաբար կպարգևատրվի համակարգիչներով։

ԹՈՒՐԵԻԱՅՈՒՄ ՇԱՅՏԻՒ ԵՐԱԺԻՇՏԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՎԵՐԱԿԱՌՈՒԱԼ ՇԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՈՒԹՅԱՆ

Մալաթիայից հայտնի երաժիշտ Քյազին Աքընջըն հայտարարել է, որ արմատներով հայ է եւ անունն ու կրոնը փոխելու համար հայցադիմում է ներկայացրել Մալաթիայի առաջին ատյանի իրավական դատարան։ Աքընջըն ասել է, որ իր հայ լինելը, անվտանգության նկատառումներով, տարիներ շարունակ թաքցրել է, սակայն անցյալ տարի՝ հունվարի 19-ին թուրքական ազգայնական շրջանակների կողմից Ստամբուլի «Ակօս» թերթի հայագի խմբագրապետ Յարանտ Դիմքի սպանությունից հետո որոշել է վերադառնալ իր հայկական ինքնությանը եւ կոչվել Սարգիս Ներսիսյան։ Մոր հետ ապրող Սարգիս ասել է, որ երկար տարիներ ծնողներն իրենց հայ լինելը վախից թաքցրել են նաեւ իրենից։ «Մալաթիայում են ապրում։ Ծագումով հայ են եւ դրա հետ կապված որեւէ խնդիր չունեմ։ Ցավում եմ, որ երկար տարիներ ընտանիքս այդ փաստը ավելորդ վախով թաքցրել է նաեւ ինձնից։ Ես ցանկանում եմ վերադառնալ իմ արմատներին։ Մարդիկ իմ անձն են սիրում եւ ոչ թե իմ Քյազին կամ Սարգիս կոչվելու համար։ Յայկական ինքնությունս թաքցնելու կամ վախենալու իմաստ չեմ տեսնում», ասել է Սարգիսը։ Նշենով, որ անունը փոխելու դատական գործընթացը դեռևս շարունակվում է, Սարգիս ասել է, որ դիմել է նաեւ Մալաթիայի անձնագրային տնօրենությանը՝ անձնագրի «կրոն» բաժնում «իսլամ» գրառումը «քրիստոնյա»-ով փոխարինելու համար։

ՄԵՍՐՈՊ ԱՐԵ. ՄՈՒԹԱՖՅԱՆԸ ՇԵՌԱՆՈՒՄ Է ԻՐ ՊԱԶՏՈՆԻՑ

«Նոյյան տապան» գործակալությունը առանց նշելու աղբյուրը հաղորդում է, որ Կոստանդնուպոլսի Յայոց

պատրիարք Մեսրոպ արք Մութաֆյանը առողջական խնդիրների պատճառով հրաժարվել է իր պաշտոնից, որը վարում էր 1998-ից։ 52-ամյա Մութաֆյանը մի քանի ամիս առաջ ենթարկվել է վահանագեղձի վիրահատության։ Վիրաբուժական միջամտությունից անմիջապես հետո պատրիարքարանը հայտարարել էր, ինչպես գրել էր «Ազգը» նախապես, որ պատրիարքին երկար ժամանակ է հարկավոր ապաքինման համար։ Յիշվանդության հետևանքով պատրիարքի բազմաթիվ պաշտոնական գործերը հետաձգվել են, ներառյալ պատրիարքարանի տեղեկագիր «Լրաբերի» հրատարակումը։ Պատրիարքարանի արքեպիսկոպոսներ Արամ Աթեշյանը եւ Շահան Սվաճյանը ժամանակավորապես կատարում են Մութաֆյանի գործառույթները։ Աթեշյանը անցյալ ամիս, Վատիկանում տեղի ունեցած Յորմի պապ Բենեդիկտոս 16-րդի եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հանդիպման ժամանակ ներկայացրել է պատրիարքարանը։ Տարբեր նյարդաբաններ, որոնք հետազոտել են պատրիարքին, ենթադրում են, որ նա տառապում է նյարդային խանգարմանք, այնուամենայնիվ, նրանք դեռ չեն որոշել, թե դա կոնկրետ ինչ հիվանդություն է։

ՍԱՍՈՒՑԻՑԻՆԵՐԸ ՇԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍԵՂՋԵԼ ԹՈՒՐԵԻԱՅՈՒՄ

Պահանջում են իրենց իրավունքների վերականգնումը Սասունի հայկական եկեղեցիների եւ գերեզմանների վրա

Մայիսի 30-ի համարում «Ազգը», անդրադառնալով Մալաթիայի բնակիչ, երաժիշտ Քյազըն Աքընջընի հայտարարությանը, նշել էր, որ նա արմատներով հայ է, դիմել է դատարան վերականգնելու համար հայկական ինքնությունն ու փոխելու անունը։ Նախորդ օրն այդ մասին նշել էր նաեւ թուրքական «Զաման» թերթը։ Մալաթիայում հայկական ինքնության վերականգնման փաստն ուշագրավ է։ Այդ առումով ավելի քան ուշագրավ պետք է համարվի պատմական ժառանգություններին տեր կանգնելու նախաձեռնությունը, որը վերջերս ցուցաբերել է «Բիթլիսի, Բարձմանի, Մուշի, Վանի վիլայեթների, գյուղերի եւ գավառների հայ սասունցիների սոցիալական փոխօգնության նշակույթի եւ համերաշխության» նշությունը։

Մինչ նախաձեռնության բովանդակությանն անդրադառնալը, նշենք, որ այս միությունը 2006-ին Ստամբուլում ստեղծել են Բաթմանում բնակվող սասունցիները, նախագահն է Ազիզ Դաղջըն։ Ինչպես սասունցի հայերի միության, այնպես էլ նրա նախաձեռնության մասին մայիսի 27-ին տեղեկացրել է թուրքական ATP հեռուստատեսության կայքերը, որի համար ամենայն հավանականությամբ իբրև սկզբնադրյուր է ծառայել Բաթմանի տեղական «Բաթման փոստ» թերթի մայիսի 26-ի համարում «Թող ախոռ

Հոյս Ամսագիր

չդաշնա պատմական ժառանգությունը» վերնագրով հրապարակված հոդվածը:

Ինչո՞ւ Բարձրանի, որովհետեւ ներկայումս Սասունն այդ վիլայեթի վարչական տարածքում է: ԱՏՎ հեռուստատեսությունը «Անատոլիայի հայերը տեր Են կանգնում իրենց Եկեղեցիներին» վերնագրով կայքեզում գրում է. «Բարձրանի հայերը պահանջում են 1915-ից հետո ավերված Եկեղեցիներն ու կողոպտված գերեզմանները: Դարեր շարունակ հայերին պատկանող այդ Եկեղեցիներն ու գերեզմանները վերադարձնելու համար է պայքարում Սասունի հայերի միությունը, որի անդամները 1915-ի իրադարձությունների ընթացքում Դայաստան փախչելու կամ քուրդ աշխարհներին ապավիճելու միջոցով փրկվածների թռոններն են: Միության նախագահի հավաստնամբ, Բարձրանի անշարժ գույքի եւ կադաստրի վարչությունը ֆիզիկական անձանց հաճանակ կամ պետական սեփականություն ծեւակերպելու նկրտումով, գիտակցարար Եկեղեցիները գրանցել է իրեւ լրված բնակարան, իսկ գերեզմանները՝ անայի տարածք, ինչը սասունցիների միության ստեղծման դրդապատճառն է դարձել: Եթե դա Ստամբուլում է հիմնադրվել, ապա դրա պատճառը ազգային փոքրամասնությունների նկատմամբ այստեղ ցուցաբերվող հանդուրժողականությունն է, քան Բարձրանում: Միությունը դիմում է ներկայացրել Բարձրանի նախանգապետարան, ինչպես նաև անշարժ գույքի եւ կադաստրի վարչություն, պահանջելով Մարութա սարի Գոմք եւ Արծվիկ գյուղերի թալանված եւ ախորի վերածված Եկեղեցիներն ու գերեզմանները որպես այդպիսիք գրանցել գույքագրման մատյաններում, ապահովելու համար նրանց պահպանությունը պետության կողմից»:

Դիմումում միության նախագահ Դադջըն, ըստ ԱՏՎ-ի, իշեցրել է հայերի Լոգանի պայմանագրից բխող ազգային փոքրամասնության կարգավիճակի, ինչպես նաև թուրքական օրենսգրքի 3998-րդ հոդվածի մասին, որն արգելում է գերեզմանների առուվաճառքը ու այլ նպատակներով օգտագործումը:

Դիմումի առումով ԱՏՎ-ին է լրացնում «Բարձրան փոստը», որին ահա թե ինչ է ասել Դադջըն. «Մենք՝ հայերս Լոգանի պայմանագրի 37-44 հոդվածների համաձայն, երկրում ունենք ազգային փոքրամասնության կարգավիճակ: Պայմանագրի 42-րդ հոդվածը մեզ իրավունք է վերապահում ինքնուրույն տնօրինելու մեր Եկեղեցիներն ու գերեզմանները, անհրաժեշտության դեպքում վերականգնելու, իսկ իշխանություններին պարտավորեցնում է դրանք որպես անշարժ գույք գրանցել համայնքի անունով: Ավելին, չնայած սահմանադրական դատարանի եզրակացությանը, թե «թուրքական կառավարությունը ստանձնում է ազգային փոքրամասնություններին պատկանող Եկեղեցիների, սինագոգների եւ գերեզմանների պահպանության պատասխանատվությունը», իշխանությունները մեզ

ամեն կերպ խոչընդոտում են»: Այնուհետեւ միության նախագահը «Բարձրան փոստին» պատմել է այն անարգանքի ու բռնության մասին, որոնց ինքը Եկեղեցիները է Բարձրանի անշարժ գույքի եւ կադաստրի վարչությունում, թե «հայերն այստեղ որեւէ գույք չունեն»:

Ինչ վերաբերում է Սասունի հայերի միության դիմումին Բարձրանի նախանգապետարանի տված պատասխանին, որի մասին էլ մայիսի 9-ի համարում տեղեկացրել է «Ալյուր», ապա այնտեղ ասված է. «Սասունի գավառում եւ գյուղերում դեռեւս հնարավոր չի եղել գույքագրել պատմանշակլության հուշարձանները: Նախանգապետարանը մարդկանց միջանտության պատճառով Եկեղեցիների եւ գերեզմանների ավերման կամ որպես ախոր օգտագործման փաստերի մասին որեւէ դիմում-բողոք չի ստացել: Խնդրո առարկա հուշարձանները շուրջ 100 տարի առաջ շրջանից հայերի հեռացման պատճառով լրվել են, դրա համար էլ միանգամայն բնական պետք է համարվի Եկեղեցիների եւ գերեզմանների բնակլիմայական գործնին ազդեցությանը ավերումը»:

Թուրքական իրականության մեջ հայկական վանքերի, Եկեղեցիների, գերեզմանների ավերումն ու անարգումը սովորական երեւույթ է: Սակայն միանգամայն անսովոր է, եթե Բիթլիսի, Բարձրանի, Մուշի, Կամի սասունցիների փոխօգնության մշակույթի եւ համերաշխության հայկական միություն են ստեղծում, միության նախագահ Ազիզ Դաղըջիի թուրքական անուն-ազգանունը չի խանգարում, որ նա հանդես գա հայկական ինքնությամբ, Լոզանի պայմանագրի մասին թուրքական իշխանություններից հիշեցնելիս «մենք, հայերս» ասի, պայքարի գոմք եւ Արծվիկ գյուղերի հայկական Եկեղեցիների գերեզմանների վրա համայնքային իրավունքների վերականգնման համար:

Ի դեպ, այն Եկեղեցիներից, որոնց համար պայքարում է միության նախագահը, Սուլր Պետրոս առաքյալի վանքը կառուցված է Մարութա սարի ստորոտին, իսկ Սուլր Աստվածածին Եկեղեցին՝ գագաթին: Ինչ վերաբերում է հայկական գերեզմաններին, ապա նրանցից միայն գոմք գյուղինը ունի 4 հեկտար տարածք:

Հ. ԶԱՔՅԱՆ

300-ԱՍՅԱԿ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՍՈՒՐԲ ՆԱԶԱՐԵԹ ՇԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ

Կալկաթայի հայկական համայնքը պատրաստվում է նոյեմբերի 8-15-ը նշելու տեղի Սուլր Նազարեթ հայկական Եկեղեցու հիմնարկեթի 300-ամյակը: Եկեղեցին կառուցվել է 1707-ին: Նախատեսվում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի մասնակցությունը հոբելյանական միջոցառումներին, որոնց շարքում հաղորդագրությունը նշուն է հովվապետական պատարագը, հրաշափառ

արարողությունը, մշակութային սեմինարը, Տաճարայում «Համայնքային կենտրոնի» բացունը, հայկական քոլեջի սպորտային համալիրի հիմնարկեքը եւ դեպի արեւմտյան Բենգալի հնագույն հայկական Եկեղեցիներ



(Զինսորայի Հովհաննես Մկրտչի եւ Սահմարադի Սուրբ Կույս Մարիամ) այցելությունը:

Հորեւանի առթիվ վերաօճվելու է Չեննայի (նախկինում Մադրաս) U. Մարիամ հայկական Եկեղեցին, որը կառուցվել է 1712-ին եւ ամբողջովին վերակառուցվել վերջերս: Մադրասը, ինչպես հայտնի է, հայկական առաջին պարբերականի՝ «Ազգարարի» հրատարակման վայրն է:

Միջոցառումների ամբողջական եւ մանրամասն ծրագիրը շուտով հրապարակվելու է: Դրան ծանրանալու համար հաղորդագրությունը խորհուրդ է տալիս այցելել armenianchurch@sify.com հայկական Եկեղեցական խորհրդարանի կայքը:

90-ԱՅՅԱ ՔԸՐԵՌԵՅԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ԳՈՐԾԱՐՁԵՐ ԿՍԵԼ

Գործարքներ կնքելու գաղափարը շարունակում է «արդիական» մնալ 90-ամյա քըրը քըրքորյանի կյանքում, հավատացած են Դետրոյթում (ԱՄՆ): «Ֆորբս» պարբերականի տվյալներով, նրա կարողությունը գնահատվում է 18 միլիարդ դոլար: Նա համարվում է 7-րդ ամենահարուստ ամերիկացին: Նրան բնութագրում են նաև որպես «ժամանակի սուր զգացողություն ունեցող անձնավորության»: Նա գիտի երբ ներդրում կատարել եւ երբ վաճառել իր բաժնետոնները:

Ավտոմեքենաշինության
բնագավառի մագնատ Լի
Այքոնկայի հետ
պատահական հանդիպումը
Ֆլորիդայի
ծիարշավարանում նրա
հայացքը թեւեռում է
Դետրոյթում տեղադրված
«Կրայսլեր» եւ «Չեներալ
մոթորս» ավտոմոբիլային
ընկերությունների վրա, եւ
նա 1990-ականներից
սկսած երեմն հաջող,
երեմն ոչ, գործարքներ է
կնքում նրանց
հետ: Վերջերս, ըստ
«Դետրոյթ ֆոի պրես»
թերթի տվյալների, նա
դարձյալ այդ բնագավառում
ներդրում կատարելու փորձ
է կատարել, զարմանը
պատճառելով շատերին: Կազինոներից, հյուրանոցներից,



կինոստուդիաներից հետո դարձյալ ավտոմոբիլային բնագավառին վերադառնալը հոդվածի հեղինակ Զնն Գալակերը բացատրում է նրա համառությանը: Գործարքներ կատարելը հավանաբար նրա արյան մեջ է:

Հասարակական

Բաց նամակ ուղղված ԹՇթ Պատգամավորական ժողովին, Ազգային մարմիններին, եւ ողջ իրանահայ համայնքին

ԹՇթ Պատգամավորական ժողովի նիստերի ընթացքում անգամներ Սասուն թաղամասի պատգամավորների կողմից արծարծվել են Հայ Մարզա-Մշակութային «Ուժֆի» Համալիրի խնդիրներն ու նրա նկատմամբ ազգային մարմինների խորական վերաբերունքի առկայությունը, եւ պահանջվել՝ ազգային մյուս միություններին համահավասար իրավունքներ: Այս կապակցությամբ հարկ ենք համարում հիշատակել համալիրի վարչության անդամ պատգամավորների կողմից ազգային մարմիններին կրթական եւ մենական խորհրդներին եւ նույնիսկ Սրբազն Առաջնորդին ներկայացրած բազմից կրկնված դիմումը ազգային դպրոցներում նարգա-մշակութային հայտարարություններ փակցնելու թուլտվության խնդրանքով, որը սակայն ավելի քան մեկ ու կես տարի զգձվելուց հետո, միայն խիստ վերջերս բավարարվեց ներկա թեմական խորհրդի կողմից: Պետք է հիշեցնել, որ սա այն պայմաններում էր, երբ «Սիփան», «Կրարատ» եւ այլն միությունների ցանկացած հայտարարություն վաղուց ի վեր ցովում ու փակցվում է մեր դպրոցներում՝ առանց ննան թուլտվության պահանջի:

Այս եւ ՇՄՄ «Ուժֆի» Համալիրին կապված այլ խնդիրների վերաբերյալ Պատգամավորական ժողովում ընթացող գրույններում, որոշ պատգամավորների (հատկապես Պժ-ի փոխատենապետ պրո. Ռուբիկ Կարապետյանի) կողմից կատարվեցին այնպիսի վիրավորական ու սաղրիչ հայտարարություններ, որոնց համար թափս Պատգամավորներից մեկը՝ պրո. Պետրոս Աբգարյանը, որն ի դեպ սույն միության հիմնադիրներից է, գրավոր դիմում ներկայացրեց Պժ-ի Դիվանին հիշյալի ներդրությունը պահանջելով՝ ոչ միայն «Ուժֆի» միությունից, այլև թափ ժողովորից, որը սույն միության գլխավոր հիմնադիրն ու ներկայի տերն է:

Պրո. Կարապետյանն հատկապես իր խոսքերուն անդրադարձել էր «Ուժֆի» համալիրի հիմնադրմանը՝ այն համարելով ոչ ազգային, նույնիսկ՝ ոչ հայ:

Ակնյայտ է, որ ննան ամբոխավարական հայտարարություններով հանդես եկող հարգելի պատգամավորը մինչ օրս «Ուժֆի» միության հարկի տակ չի եղել, որպեսզի տեսած լինի, թէ օրական քանի տասնյակ ու քանի հարյուր՝ ամենահայեցի դաստիարակությունն ստացած մանուկ-պատանի, երիտասարդ ու տարեցներ են մտնում ու ելնում՝ մասնակցելով մարզամշակութային ամենաբազմազան աշխատանքների: Թերեւս, եթե նույնիսկ մեկ անգամ եղած լիներ այստեղ, նժվար թե համարձակվեր հարցականի տակ տանել թափի ժողովորով լեցուն միության ազգային պատկանելիությունը:

Իսկ գալով անցյալին եւ «Ուժֆի» միության հիմնադրման որպիստերանը, որը նույնպես

Հոյս Ամսագիր

«կասկածելի» է համարվել հիշյալ պատգամավորի կողմից վարկարենելով ազնիվ ու հայրենասեր այն մարդկանց, որոնց անշահախնդիր ջանքերի շնորհիվ հիմնարդվել է այս միությունը, պեսոր է ասել, որ դարձյալ ակնհայտ է, որ նա կամ իրոք անտեղյակ է եւ անմեղ մի հարց է տվել, որը դժվար է հավատալ՝ նկատի ունենալով նրա տասնյակ տարուց ավելի փորձը ազգային մարդիններում, կամ էլ՝ պարզապես անտեղյակ է ձեւանում՝ ինչ-որ հետին նպատակների հասնելու համար։ Ամեն դեպքում, ազգային կյանքով ու ճակատագրով գրադված նման պաշտոնյան, թվում է, մինչ օրս բավական ժամանակ պետք է ունեցած լիներ, որ դեռ հեղափոխությունից առաջ հիմքը դրված «Շաֆֆի» միության անցյալով հետաքրքրվեր եւ իր կասկածները փարատեր, որպեսզի այս բարդ ժամանակներում, երբ ազգային մարդինները առավելագույնս պետք է աշխատեն համայնքի խնդիրներն օր առաջ կարգավորելու, պատգամավորների թանկ ժամանակը չվատներ ննան անհիմն ասեկուսներով ու հնահոտ զրույցներով։

Ցավոք սրտի, ի պատասխան ներկայացված նամակի, պրն. Ութիկ Կարապետյանը եւ նրա համախոհները ոչ միայն փորձ չառեցին թույլ տրված սխալն ուղղել, այլև ավելի հեռուն գնալով նորանոր վիրավորական հայտարարություններ կատարեցին, որոնք առավել եւս սրեցին իրավիճակը: Այսպիսով Սասուն թաղանասի եւ նրանց այս հարցում պաշտպան կանգնած այլ պատգամավորների պնդումներն իզուր անցան:

Ուստի սույն գրությամբ դիմում ենք ԹՀԹ
Պատգամավորական ժողովին, ինչպես նաև այլ
մարդիներին, ազգային խորհրդուն հետաքրքրված
անձանց եւ ողջ իրանահայ համայնքին.

- Ազգային մարմինները որոշակի խճակցության կամ անհատների սեփականությունը չեն, այլ ողջ իրանահայ հաճայնքին են պատկանում, որին նրանք պարտավոր են պատասխանել իրենց յուրաքանչյուր քայլի եւ նոյնիսկ խոսրի հաճար: Ուստի կարապետայաններին թող չքվա, որ կարող են ասել եւ անել ինչ որ ուզեն, քանի որ այդ բոլորի հաճար ուշ թէ շուտ պետք է պատասխան տան:

- Նրանց կողմից «Րաֆֆի»-ին վերագրված «պառակտիչ» ու «դավաճան»-ը հենց նրանք են, ովքեր ազգային մարմիններում զբաղեցրած իրենց պաշտոնն օգտագործում են ի շահ հենց-որ խմբակցության կամ յուրայինների՝ մյուսներին համարելով նույնիսկ ոչ հայ, եւ հենց դրանով թշնամության սերմ ցանելով համայնքում։ Արդարեւ՝ նրանք են գլխավոր պառակտիչները, եւ ոչ թե այն ազմիկ ֆուտբոլիստները, ովքեր առկա միություններում տիրող նեղմիտ կուսակցականների ձեռքից խոլս տալով՝ ծվարեցին այդ հողակտորի վրայ, որը եւ իրենց արդար աշխատանքով վերածեցին այսօրվա հոյակապ մարզամշակութային համալիրին։

- «Ուաֆֆի» հանձնիրը մեր ժողովրդի ապակուսակցական ազգային գաղափարախոսության մարմնացումն է: Այստեղ բոլորը ի մի են գալիս ինչ-որ կերպ հայրենակցին ու հայրենիքին ծառայելու: Եւ եթե այս ուղղությունն ու գաղափարախոսությունը վերջին պատգամնավորական ընտրություններում անհամեմատելի հաղթանակ նվաճեց՝ շահելով հազարավոր ձայներ՝ ի համեմատություն կուսակցամետների քանի տասնեակների, ուրեմն առավել եւս պետք է հաշվի նստել նրա հետ: Չե՞ որ ի վերջո այդ ընտրություններում մեր ժողովուրդը որոշեց իր

կղոնք, արտահայտեց իր կամքը: Ուստի մեկ անգամ եւս հարգելի պատգամավորներին հիշեցնելով այդ փաստը, պահանջում ենք հարգել ժողովրդի կանքը եւ նրան ներկայացնող պատգամավորներին, խուսափել նախկին նեղմտությունից ու հաշվեհարդարներից, որպեսզի կայանա համերաշխության ու փոխըմբռնման այն մթնոլորտը, ուր բոլորը՝ անկախ քաղաքական հայացքներից, կաշխատեն ոչ թե որոշակի կուսակցության ու խնբակցության, այլ ողջ ժողովրդի շահերի համար:

Յարգանո՞
ՀԱՅ «Րաֆֆի» Համալիրի Վարչություն
21.05.2008

ՏԱԳԱԿԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈՅ ՄԵԶ

Հայաստանեայց Եկեղեցւոյ տազնապը շուրջ յիսուն տարուան անցեալ եւ խորութիւն ունի: Բացուած վերքը երբ կարելի չեղաւ դարնանել ատենին, ան հետզիւտ խորացաւ եւ վերածուեցաւ խլիրդի: Այսօր զայն բուժելու մասին խօսք իսկ չկայ, եղածը կատարուած հրոդութիւն նկատելով:

Բայց շարունակել առաջ հարկ է պատճական հակիրծ ակնարկ մը նետել մօտիկ անցեալին վրայ: Սիսէն Անթիլիաս փոխադրուած աքսորական Կիլիկեան արողին գործունեութեան տարածք տրուեցան Սուրբոյ, Լիբանանի եւ Կիպրոսի թեմերը, Ազնայն հայոց կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի ու Պոլսոյ պատրիարքութեանց համանութեամբ, ի հոգեւորս Ենթակայ մնալով Մայր արքո Ս. Էջմիածնին: ՔՔԸ Սիութեան, Կիլապենիկեան հաստատութեան եւ այլ նուիրատուութիւններով իիմնուեցաւ դպրեվաճը ու տպարան, ուրկէ լոյս տեսան «Յասկ» պաշտօնաթերոն ու կրօնական Բռնյիրի բազմաթի գիրքեր: Մինչեւ Երանաշնորհ Գարեգին Ա Յուկտիկեանցի գահակալութիւնը Անթիլիասի կաթողիկոսութիւնը դարձաւ լոյսի ու լուսի տիպու մասքան ու Անձ Երեքնի Ալբասահ:

ու յոյսի փառոս մը աքսորէն ու Սեծ Եղբակնեն վերապարօծ Մերձաւոր Արեւելքի նորահաստան հայ գաղութեներուն համար, համերաշխ գործակցութեամբ եւ օրինութեամբը Սայր աթողին: Բայց Համաշխարհային Բ. պատերազմն յետոյ այդ համերաշխ կացութեան մէջ փոփոխութիւն մը յարա եկա, Արեւելք-Արեւմուտը հակամարտութիւն մը սկսաւ, որ հետզիետն սրբնով թշնամնքի եւ փոխադարձ սպառնալիքներու աստիճանին հասաւ: Արեւելք ըստով պէտք է հասկնալ մասնաւորաբար Սովետական Միութիւնն ու իր արքանեակ պետութիւնները, որոնց մէջ անշուշտ Հայաստանն ալ կար: Արեւմուտը խոր մտահոգութեամբ կը տեսնէր համայնավար յեղափոխութեան համաշխարհային ծառալումը եւ զայն վտանգաւոր նկատելով իր ընկերային, տնտեսական դրամատիրական վարչաձեւին տույր պայքար ծենակից անոր դէմ: Հակահամայնավար այս վայրով պայքարին ալիքները հասան նաեւ հայ իրականութեան սփիտքահայութիւնը Երկիրեղկութեաւ հայաստանեան եւ հակահայաստանեան ճակատներու: Դամկավար, Հայկական բարեգրծական ընդիհանուր միութեան, Հնչավեան եւ Համայնավար հոսանքները կազմեցին «հայաստանեան ճակատոր», իսկ Հայ յեղափոխական դաշնակցութիւնն ու իր արքանեակները՝ «հակահայաստանեան ճակատոր»:

ՈԱԿ եւ ՔԲԸ Միութիւն Հայաստանի հանդէպ իրենց դրական կեցուածքը կ'արդարացնէին Խորիրդային Հայաստանին միակը եւ միակ կարելին զլլալուն իրականութեամբ, իրենց պրօ-հայաստանեան արտայայտութեանց ու գործունեութեան միշտ կցելով «քեւ չենք բաժներ հոն տիրող Վարդապետութիւնը», կամ «վարչաձեւէն անկախարար» բանաձեւումները, որոնք անշուշտ ճշմարտութեան ալ կը համապատասխանէին, մինչ Դաշնակցութիւնը, սոցիալիստական նման վարդապետութեան մը հետնեւելով թեւ նօտ էր համայնավար գաղափարաբանութեան, բայց Արեւնուտքի նիւթական, քարոյական ու քաղաքական քաջալերանքով կը գլխաւորէր հակահայաստանեան ճակատը: ՀՅԴ նտահան չըր կրնար ընել նաեւ, իր եռագոյ, որ համանամար թեժմին տապասունով

ճամբար կրնար հարթուիլ իր տիրապետութեան: Այս կացութիւնը թէ Հայաստանի եւ թէ՝ Սփիւրքի մէջ պատճառ եղաւ եղաւ եղայրասապան կրիմերու եւ Անթիլիասի կարողիկոսութիւնը մղեց Ս. Էջմիածնայ Մայր աթոռին դէմ ընրոստ դիրքի: Այնուհետեւ ՀՅԴ ծեռանուխ եղաւ Անթիլիասի կարողիկոսութիւնը ծեռք զգելու պայքարի մը, որ հասաւ ծայրայեղ հանգրուաններու եւ եղայրասապան կրիմերու եւ վերջապէս, միշտ ամերիկեան քաջալերանքով եւ նախագահ Շամունի ու Լիբանանի ոստիկանութեան քոնի միջամտութիւններով Անթիլիասը ենթարկուեցաւ ՀՅԴ-ին, վերածուելով քաղաքական նպատակներու ծառայող կրօնական հաստատութեան նր: Այնուհետեւ Անթիլիաս ծեռանուխ քաջարական ծաւալման արշակ մը, Սփիւրքի տարածքին հիմնելով Եկեղեցական մրցակից կամ հակարոտ թեմեր, արդեն իսկ գոյութիւն ունեցող Էջմիածնայ Մայր աթոռին կողմէ հիմնուած թեմերուն: Այսպէսով պառակտումը ստացաւ աւելի մեծ ծաւալ ու սուր բնոյք՝ Անթիլիասէն տարածուելով սփիւրքահայ գրեթե բոլոր համայնքներէն ներս: Արդարացման փորձը որքան պարզ թուացող, նոյնքան ալ չարամիտ էր, պատճառաբանելով, որ Սերծաւոր Կրեւելի հայ ժողովուրդն է, որ տարածուած է դէպի Արեւուտք, հետեւաբար Անթիլիասի կարողիկոսութեան պարտականութիւնն է տէր կանգնիլ իր հօտին: Կարծէս թէ այդ ժողովուրդը անթիլիասական հաստակութիւն ուներ եւ անտեսելով այն իրականութիւնը, որ անոնք արդէն Ամենայն հայոց կարողիկոսութեան թեմեր էին, ու խախտելով նաեւ այն համաձայնութիւնը, որով Անթիլիասի Եկեղեցական իշխանութեան տարածքը ճշդուած էր Սուլիիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի վրայ: Յապա Իրամի հայ համայնքնե՞րը անո՞նք ալ Անթիլիասի պատկանող նախկին թեմեր էին: Անուրանալի իրականութիւնը այն է, որ իրանահայութիւնը ոչ մէկ կազ ունեցած է Անթիլիասի հետ: Անթիլիասի (հմա՝ ՀՅԴ) ծաւալապաշտական արշակն սուստ ու պատիր պատճառաբանութիւնը, Իրամի օրինակով, փուլ կու գայ՝ անգամ մը ես փաստելու համար, որ ուրիշ էին շարժարիները, քաղաքական հեռաւոր նպատակները, որոնք կը զգտին սփիւրքահայութիւնը լծել ամերիկեան հակահամայնավար պայքարի կառքին, առանց նկատի առնելու այն իրականութիւնը, որ Յապաստան կը գտնուէր համայնավար վարչակարգի տակ, հետեւաբար, հայկական շահերու հակառակ էր այդ պայքարին Սփիւրքի լուուլը: Անհամայնակ թէ ուր հասաւ Եկեղեցական տագնապին խորը կազմող քաղաքական պայքարը, անգամ մը ես փաստելով, որ սիալ դեկավարութիւնը մը կրնայ ափսոսալի կացութիւններու առաջնորդել հաւաքականութիւն մը, կամ ազգ մը ամբողջ: Վաղուց ի վեր Ս. Միութիւն գոյութիւն չունի եւ անոր հետ Հայաստանի համայնավար վարչածեւն ալ պատճութեան անցած է, բայց Եկեղեցական Երկիրեղուած վիճակը կը շարունակուի:

Եթէ Հայաստանի համայնավար վարչածեւն էր եւ Մայր աթոռին ալ նոյն վարչածեւն տակ գտնուին էր պատակուումին «արդարացում»ը, Երկար ժամանակէ ի վեր փիխուած է կացութիւնը Հայաստանի եւ Ս. Էջմիածնայ մէջ: Ժամանակը չէ, որ Անթիլիաս ալ փոխէ իր ընթացքը գործնականորդն ճանչնալու համար Մայր աթոռին վերին իշխանութիւնը՝ վերջ տալով հայ Եկեղեցւոյ պատակուումին:

ՀԱՅԿ ԱԳԳԱԾԵԱՆ, Մոնրէալ

Մշակություն

Ծանոթանանք «Թեքյան» Մշակութային Միության հետ

Հիմնադրվել է 1947 թվականին Բեյրութում մի խումք սփիւրքահայ նվիրյալների միջոցով: Այդ ժամանակահատվածում սփիւրքը գտնվում էր պատճական մեծ իրադարձությունների շրջանում: Միությունը կյանքի կոչվեց «Ուամկավար Ազատական» կուսակցության ղեկավարության հրախուսանքով: Նրանք արդեն նախքան միության

հիմնադրելը սկսել էին կազմակերպել ու նպաստել հայրենադարձությանը, հիմնականում Միրիայից, Լիբանանից, միևնույն ժամանակ նաև Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Ս. Խահանգներից և նույնիսկ Չինաստանից հայ բնակչներով ընդհանուր քիով 110.000 հայեր տեղափոխեցին Հայաստան: Հայրենադարձությունից հետո անհրաժեշտ էր սփիւրքի կապը հայրենիքի հետ կենսունակ ու աշխուժ պահել և սփիւրքահայությունը պետք էր սերտորեն առնչվեր հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանության գործին:

Սփիւրքի մեջ հակահամայնավար պայքարին գինակցող և հայրենիքի դեմ հաշճակցության պայքարին հակամշուլու ուղղությամբ «Ուամկավար Ազատական» կուսակցության կողմից ստեղծվեցին «Համազգային» մշակութային ընկերություններ, որտեղ մեծ դեր ունեցան հայտնի բանաստեղծ Վահան Թեքյանը և մի շարք այլ մտավորականներ:

«Թեքյան» մշակութային միությունը (ԹՍՄ) լայնածավալ աշխատանքներ տարեց հայրենիքից տարբեր խմբեր հրավիրելով սփիւրքի տարբեր գաղթոջախներ և ստեղծեց նաև թատրոնական ու մշակութային տարբեր խմբեր սփիւրքահայությանը հայրենիքի իրազեկ պահելու նպատակով:

Մշակութային գործունեությունը, ինչպես որ դրսերպվել էր Լիբանանի և Սիրիայի մեջ առաջին բանամյակին, չմնա իր սկզբնական քայլով և տեղում: Բնական ճուղակորումն վեցեքան»-ի տարածումը սփիւրքի մեջ եղավ արագընթաց բայց սահմանափակ: Որտեղ որ տեղափոխվեցին Միջին Արևելքի թեքյանականները մշակութաբաններն, ստեղծեցին մասնաճուղեր, դրանց քվում Յուլիսիսային Ամերիկայի Կենտրոնական Վարչությունը՝ վարտունականի վերջերում մասնավորապես Տիգրան Անսարյանի կնքահայրությամբ: Կենտրոնական Վարչության ստեղծումն և նրան առընթեր, «Թեքյան»-ը ունեցավ մինչև 13 մասնաճյուղը Ամերիկայի և Կանադայի մեջ:

Հիմնադիրների Երկրորդ մեծ ծրագիրը եղավ կրթական գործը: Սկզբնական քայլերից կարելի է նշել Բեյրութի աղքատիկ արագությունը կրուելու մեջ եղավ արագընթաց բայց սահմանափակ: Որտեղ որ տեղափոխվեցին մշակութաբաններն ապահովությունը և ստեղծումը կրթության համար, մանկացմանը և արագագությունը շրջանի մեջ: Տվյալ ժամանակների պահանջը գոհացնող մի ծրագիր էր Կահան Թեքյան վարժարանը, որտեղ մինչև 800-900 աշակերտով հսկա ներդրում եղավ կրթական գործունեությունը և արագագությունը շրջանի մեջ: Տույն փորձը կրկնվեց 1981 թվականին Լու Անջելսի մեջ՝ «Արշակ Տիգրանյան վարժարանի ստեղծումն»:

Հայաստանի Երրորդ հանրապետության հոչակումով Սփիւրքի առջև բայց սահմանաթիւ մի Երկիր ներկայացած էր կազմակերպությունը տարբեր տարբեր ծրագրներով ու նպատակներով մուտք գործեցին Երկիր, որոնց կառավագեններն ու բնույթը որոշ չափով ընթացնելի էր սփիւրքահային: Սակայն Թեքյան Մշակութային Միությունը շրջանի մեջ էր, որ 1990 թվականին պաշտոնապես հիմնադրվեց Հայաստանի մեջ և Երկու տարի հետո սկսեց իրականացնել իր կենտրոնի շենքը Խանջյան փողոցի վրա՝ Լոնդոնի Թեքյան բրաստի նախաճենությանը և նյութական մասնակցությանը՝ ԹՍՄ կենտրոնականի: Սփիւրքի մեջ կամավոր աշխատանքի սկզբունքով գործող Թեքյանը տարբեր իմաստ և բնույթ ունի Երևանի մեջ:

Հյուսիսային Ամերիկայի Թեքյանը մարդասիրական պատճառներով որոշեց Հայաստանի մեջ հովանավորել Կահան Թեքյանի անվան դպրոցներ, թվով չորս, նրանց ուսուցչներին ու անձնակազմին նյութապես նպաստելով տարեկան 25-35 հազար դպրոցը:

Թեքյանի մտավորականության և գաղափարախոսության ներքո հրատարակվել է հետևյալ մանուլը՝ 1- 1946 թվականին Վահե Վահեյանի խնբագրությամբ «Անի» գրականության և արվեստի ամսագիր: 2- 1956 թվականին լուս տեսավ «Շիրակ» գրական ամսագիրը և 3- «Քաֆին» պարբերաթերթը: 4- Ամերիկայի տարածաշրջանում Թեքյանը հրատարակվել է Սոնթեալայում «Ապագա»-ն 5- Բուենոս Այրեսում «Սարդարապատ» պարբերականը: 6- 80 ական թվականներին

Լոնդոնի մեջ լուս տեսավ «Երեքունի» երկշաբաթերթը, սակայն կարծ կյանքով: Քրատարակվում են նաև 7- «Արարատ» անգլիատառ, 8- «Խավասարոյ» և 9- «Առագաստ» հայատառ պարբերականները:

Մնայուն և շարունակվող սովորություն է դարձել մրցանակների շնորհումը գրողներին, լրագրողներին և մտավորական անհատներին: Թեքեյան Մշակութային Հայկաշեն Ուզունյան գրական մրցանակն արդեն շուրջ 40 տարվա ավանդույթ է դարձել: Թեքեյանի մշակութային բաժանմունքը Հայաստանի մեջ մասնակի հաստատվելուց հետո, տարեկան մրցանակի սկզբունքով նյութական վարձատրությամբ մրցանակներ կտրամադրի արձակագիրներին, բանաստեղծներին, թատերագիրներին և պատմաբաններին:

ԹՍՍ-ն հիմնադիրների մարմինը գործում է Բեյրութի մեջ: Հիմնադիրների մարմին սեփականությունն է Բեյրութի Թեքեյան կենտրոնը: Ամերիկայի և Կանադայի կենտրոնական վարչությունը և նրա կողմին Գործադիր Վարչությունը, որոնց դեկավորում են աշխարհագրական այս շրջանների գործունեությունը, կենտրոն ունենալով Բոստոնը: Թեքեյանի սեփականություններից են Փաստինայի Պեշկերության կենտրոնը, Արշակ Տիգրանյան ընդարձակված երկրորդական վարժարանը, Մոնթեալի Թեքեյան կենտրոնը և երկու վարձու կենտրոններ՝ Թորոնորի և Նյու Յորքի մեջ:

Աշխարհի մեջ գործունյա են 15 մասնաճյուղեր՝ իննը Յուսիսային Ամերիկայի տամարանատում: Բացի հիշյալ կալվածքները, աշխարհի տարբեր քաղաքների մեջ օրինակ Հայեափի, Դամասկոսի, Երուսաղեմի, Ամսանի, Սիդնի և Սոնթեալի կալվածքները ծառայում են որպես ակումբ կենտրոն:

«Կարցագրույց՝ «Վաղարշապատ» երգի-պարի թատրոնի տնօրեն Անահիտ Մադոյանի հետ

Հ.Խնդրեն ներկայացնելով Ձեզ տեղեկություններ տաք «Վաղարշապատ» համույթի կազմակերպման մասին:

Պ. Ես «Վաղարշապատ» երգի-պարի թատրոնի տնօրենն եմ Անահիտ Մադոյան: 4 տարի առաջ մենք հիմնադրեցինք «Վաղարշապատ» երգի-պարի թատրոնն էջմանին քաղաքում: Սկզբնական շրջանում մեր նյաստական էր՝ օգնել անապահով ընտանիքների երեխաներին, որոնք ունեն տաղանդ, սակայն դրան չունենալու պատճառով չեն կարողանում հաճախել որևէ խնճակ, իսկ մոտ մեկ տարի անց մենք նկատեցինք, որ բավականին աշխատություն է տիրում և շատ մասնակիցներ են մեզ դիմում և սկսեցինք ավելի լրջորեն մոտենալ քայլերին, հետևաբար մեզ մոտ ընդունելություն եղավ: Այժմ մեզ մոտ սովորում են նաև հարնար պայմաններում ապրող ընտանիքների երեխաներ, բայց բոլորի համար ուսուցումը անշահանդիր անվճար է և յուրաքանչյուր ծախս հոգում ենք մենք և քիչ է պատահում, որ որոշ պարտականություններ մնում են ծնողների համար:

3. Ի՞նչպիսին են ձեր պարապմունքները աշակերտների հետ:

Պ. Ինչ վերաբերվում է մեր ընդհանուր գործունեությանը, մենք իրավիրել ենք մասնագետներ երևանի պետական կոնսերվատորիայից, պարարվեստի ուսումնարանից և յուրաքանչյուր մասնագետի հետ 6 ամսի պայմանագիր ենք կնքել, մասնագետները վճարվել են իս անձնական միջոցներից ձեռք բերված գումարներով և ոչ մի հովանավոր չենք ունեցել: Ապա

լուրջ պարապմունքներից հետո եղան համերգներ՝ Հայաստանի տարբեր քաղաքներում և մարզերում, առաջարկվեց համերգներ ունենանք արտերկրում, որն ինձ համար շատ անսպասելի էր:

3.Հայաստանից դուրս ո՞ր քաղաքներում եք համերգ ունեցել:

Պ. Մեր առաջին համերգը եղավ Սիրիայի Հալեպ քաղաքում, բավականին մեծ միջոցառումներ եղան, գործեր բոլոր միություններում համերգներ եղան և շատ մեծ նկարագրությունների եղան ու դա մեր, այսպես ասած, առաջին եկամուտն էր, որը մենք վաստակեցինք մեր իսկ աշխատանքով:

Այսուհետև եղել ենք Պոլիսում, Ֆրանսիաում, Գերմանիաում:

Իսկ Համբուրգում մեզ շատ անսպասելիորեն հրավիրեց Նատոյի գործերի համաժողովը, որտեղ մենք նենք ներկայացրինք Հայաստանը: Դա երկի իմ ձեռք բերած ամենաբարձրագույն յաջողություններից մեկն էր, քանի որ իմ աշակերտները հայկական տարագներով Նատոյի անդամ երկրների գեներալներին ու ադմիրալներին հյուրասիրեցին հայկական գարաներով, գինիով և այլն, իսկ երբ մենք ներկայացրինք Հայեանիք երգը բոլորը հոտմկայս ծափահարում էին մեզ համար, այդ թվում նաև Աղբեցանի ներկայացուցիչները և դա ինձ համար հաղթանակ էր: Հետո նորից Հայեա գնացին երեխաները և իինա արդեն իրանում ենք:

3.Ի՞նչ տպավորություն ունեք իրանից:

Պ. Մինչև այստեղ գալու բոլորովին ուրիշ աշխարհ էինք պատկերացնում, բայց, երբ հանդիպեցինք այստեղի հայ համայնքին, զգացինք, որ հայկական շրջան կա և այստեղի ժողովուրդը շատ հյուրատեր և բարի հոգով մարդիկ են:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Դկտ. Ռուբեկ Սարդարյանին և իրանահայ գործարար Պրն. Եղիկ Մեհրաբյանին, որոնք մեզ ընթացք տվեցին և գնահատեցին մեր աշխատանքը և մենք շատ ուրախ ենք, որ կարողացանք արդարացնել նրանց սպասելիքը:

3.Ապագայում ի՞նչ ծրագրեր ունեք:

Պ. Առաջիկա մի տարում մենք պետք է լինենք ԱՄՆ ում և դրանից հետո կսկսենք համագործակցություններ և արդեն որոշ գործեր արվել են: Օրինակ, շուտով Ֆրանսիայում կրացվի «Վաղարշապատ» երգի-պարի թատրոն, որը մեր մասնաճյուղն է լինելու:

Հայաստանի մշակութային նախարարության կողմից պետք է մեզ հասկացվի միջոցներ և տարածք, որպեսզի անապահով երեխաների կարողանան զբաղվեն մշակութային աշխատանքներով:

3. Վերջում ի՞նչ պատգամ կամ խոսք ունեք մեր ընթերցողների համար:

Պ. Նախ շնորհակալ եմ Զեղանից, որ պատիվ ունեցանք մեզ ներկայացնել նաև Ձեր ընթերցողներին, ցանկանում են մեծ լսարան ունենար և «Լուս» թերթը կարդան բոլոր հայերը:

Ընթերցողներին կցանկանամ համախմբվածություն. Ես գիտեմ, որ հայրենիքից դուրս հայերը ազգայինությամբ կարողանան իրենց ամուր պահել ցանկացած երկրում: Ցանկանում են խաղաղություն ամենքին:

**Հարցագրույցը վարեց՝
Շուշինե Մաթարյանը**

Մշակության Սեմինար (Սաս 3) Համայնքի մշակության կյանքը եւ մշակության միությունները

Անցյալի փորձից ենթակա լավատես չեմ նորացող իրանահայ համայնքի մշակությի մասին: Երբ խոսում ենք որոշակի հավաքականության մշակությի մասին, դա ներառում է սոցիալ-տնտեսական բոլոր գործունեությունները՝ սկսած առօրյա կյանքից մինչև ընթացիկ մտավոր արտադրանքներն ու ազդեցությունը համանարդկության մշակությի զարգացման վրա:

Մշակության ժառանգությունն օգնում է այդ հարաբերությունների զարգացմանը: Դավակնում ենք, որ հարուստ մշակությի տեր ենք, մի քան, որ հայերս սիրում ենք հաճախ կրկնել, դա անպայման չի նշանակում, որ անցյալի հարուստ ժառանգությունը մեզ հետ է և մեզ ապահովում է որևէ վտանգների դիմաց, որովհետև, եթե լավագույն ձևով չենք օգտագործում այն մեր ներկա մշակությի բարգավաճման գործընթացի համար, դա անտեղի հպարտաճրի արի է և որևէ քան չի նշանակում, հակառակ պարագային ինչպես պիտի բացադրել որոշ ցեղերի հպարտաճրի անհետացմանը պատմության էջերից իրենց հսկայական մշակության ժառանգություններով հանդերձ: Իհարկե չպետք է մոռանանք քաղաքական, աշխարհագրական և այլ ազդակների դերն այդ հարցում: Յիշա հարց է ծագում, թե մեր համայնքն ինչքանո՞վ է օգտվում իր հայկական մշակության ժառանգությունից իրեն հոգեպես ամրապնելու և այս ոժվարին պայմաններում իր մշակությին զարկ տալու և հաջորդ սերնդին փոխանցելու ուղղությամբ: Սփյուռքի պարագայում, երբ հանրային և զանգվածային հաղորդամիջոցների գոյություն չունեմ, այդ գործը մեծապես մտնում է դպրոցների, մամուլի և միությունների պարտականությունների մեջ: Այստեղ հիմա կենտրոնանաք մշակույթի հարցի վկա միություններում, որովհետև նպացները արտաքին պահպաների և երկրի կրթական համակարգի բերունով թվում է կարող չեն այնպես, որ պետք է ազդեցիկ լինեն այդ գործընթացում: Կամ մանուլը ինչպես գիտենք, չուն այն տարածումը, որ պիտի ունենար իր դերը համայնքի մշակույթի զարգացման գործում: Մինչդեռ միություններն անմիջական կապի մեջ են ժողովրդի հետ և կարող են ավելի լավ կատարել այդ առաքելությունը: Իսկ արդյո՞ք նրանք օգտվում են այդ հանգամանքից, լավագույն դեպքում պետք է ասենք՝ հազիվ: Պատճառները բազմաթիվ են, բայց են կանորդադանամ կարևորներին: Բոլոր միությունները նույն հարթության վկա չեն գտնվում և տարբերվում են ըստ իրենց վարիչ մարմինների մտային կարողության մշակույթի ասպարեզում: Գնահատականներն ընդհանուր բնույթ ունեն, ամենա նրանց քաղաքական կողմնորոշումից: Այժմ ներկայացնենք այն պատճառները, որոնք խչընութ են հանդիսանում միությունների համար իրենց դերը կատարելու գործում: Առաջինը միությունների քաղաքականացված մրնուրուն է. գաղտի չէ, որ 1941 թվականից հետո, երբ Ռեզա Շահը փակեց հայկական դպրոցները, քաղաքական ուժերը աշխատեցին բացել նոր միություններ կամ իրենց ազդեցության ներքո առնել եղած միությունները և դրանց միջոցով իրենց գաղափարները տարածել հասարակության մեջ: Վիճակը խաղաղվեց 1953 թվականին՝ Իրանի հեղաշրջումից հետո, երբ մրցակից կուսակցություններն ասպարեզից հեռացան և, այսպես կը զված, քաղաքական դաշտը դարձավ:

Նկատեի է, որ համայնքի լավագույն մշակության աշխատանքները տարվել են սույն թվականից մինչև Իրանի Իսլամական հեղափոխությունը ընկած ժամանակահատվածում: Երբ հեղափոխությունից հետո տարբեր գաղափարախոսություններ իջան ասպարեզ, դարձալ գաղափարախոսությունը կարևորություն ստացավ ազգային աշխատանքներում և գրականությունն ու արվեստը դարձան պատկան գաղափարախոսության հետևող՝ եթե ոչ գովազդողը: Սա, իհարկե, ընադատություն չէ քաղաքական բնույթ կրող ազդեցիկ գործերի, որոնց կարելի է դատել պատմության տարբեր շրջաններում, բայց, երբ որոշակի գաղափարախոսություն որևէ մշակության միության կողմից ներկայացված է որպես գրական կամ արվեստի գործ, ոչ միայն

հանդիսատեսին է գցում շփորի մեջ, այլ խափանվում է գրող-արվեստագետի հավասարակշռությունը և սահմանափակութ վերջինի ազատ մտածողությունը: Յետևաբար նոր գործեր աշխարհի չեն գալիս: Երբ մշակության միությունները որոշ գաղափարախոսության են հետևում, ուրեմն դրանք պետք է դեկավակը այդ գաղափարախոսությանը հավատարիմ մարդկանց միջոցով, նույնիսկ եթե նրանք գրականությունից ու արվեստից անչափ հեռու են:

Վերջին երեսուն տարիների ընթացքում մեր համայնքում առաջացած արտագաղթը պատճառ է դարձել, որ միությունների մարդկային և նյութական ուժերը իրենց նվազագույնին հասմեն, և նրանց թիվը թերամահայության համեմատ անհմասս կերպով ավելանա: Պատշերացքեր, որ մենք այսօր ավելի շատ միություններ ունենք քան երեսուն տարի առաջ, երբ թերամահայության թիվը երեք անգամ ավելի էր: Արյով՝ այս քանակը նպատակահարմար է համայնքի մշակության կյանքի համար և չի ջլատում փոքրացած զարգացման գործիքի հետևողը:

Արտագաղթի հետևանքով պակասել է արվեստագետների թիվը, հետևաբար կամ մենք պետք է ականատես լինենք նոյն անձնավորությունների միջոցով մշակության աշխատամքը կատարելուն, և այդ փաստը հաճախ կրկնվում է մշակության միջոցառումների ժամանակ կամ էլ հոնարիկենք անրակ և անձակ ներկայացւումների առջև:

Պեսու է մեր երիտասարդության հաղորդակից դարձնենք թարմ և ժամանակակից միջազգային գրականության և արվեստի հետ, որպեսզի ունենանք կիրա երիտասարդություն: Իսկ նաև մի առաքելություն ներկա միությունների դրվագքով անհնարին է: Այսպիսով՝ թերամահայության վիճակը մտահոգիչ է, երբ պայմանները չեն հանապատասխանում համայնքի կարիքներին, համայնքը ինքը պետք է պայմաններն համապատասխանեցնի տիրող իրավիճակին: Ուրեմն պետք է կենտրոնացնենք մեր ուժերը և լավագույն կերպով օգտագործենք մեր հնարավիրությունները:

Դեռևալ առաջարկներն են ներկայացնում, որոնք առաջարկել են ինգ տարի առաջ, բայց Թեմական խորհրդի կողմից ընդուառաջեցին:

- 1- Մշակության նարնի վերակազմում:
- 2- Մշակության կենտրոնի կամ տան ստեղծում:
- 3- Եյութական հովանավորություն առժեքավոր ձեռնարկներին:
- 4- Մշակության ձեռնարկների անվագ կամ ձրի տոմսների բաժանում աշակերտության համար:
- 5- Միությունների միացում կամ միահանում:
- 6- Անվագ տեղեկատվություն, թերթեր տրվի աշակերտությանը և խախուսվի ընթերցանությունը:

Ցավակցական

Խորը վշտով համակված ցավակցում ենք հայտնում Ալավերդյան և Յեմարյան ընտանիքներին ու հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի:

Ծաղկուց Ալավերդյան-Յեմարյանի
ցավակի մահվան առիթով:

«Լույս» ամսագրի
խմբագրական կազմ:

Ցավակցական

Խորը վշտով համակված ցավակցում ենք հայտնում Ալավերդյան և Յեմարյան ընտանիքներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի:

Մայիս Խաչատրյանի

ցավակի մահվան առիթով

«Լույս» ամսագրի

խմբագրական կազմ: